



**Խնդիրներ  
և խորհուրդներ  
կանանց  
նկատմամբ  
ընտանեկան  
և սեռական  
բռնության  
թեմայի  
լուսաբանման  
վերաբերյալ**

Ձեռնարկ Լրագրողների համար

**Խնդիրներ  
և խորհուրդներ  
կանանց  
նկատմամբ  
ընտանեկան  
և սեռական  
բռնության  
թեմայի  
լուսաբանման  
վերաբերյալ**

Ձեռնարկ լրագրողների համար

© Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա

Երևան  
2021

Ձեռնարկը կազմել է Ընդդեմ կանանց սկստմամբ բռնության կոալիցիան  
«Զվինա թիվ Զվինա» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Ձեռնարկից որևէ հատված օգտագործելու և մեջբերելու պարագայում  
համապատասխան հղում կատարելը պարտադիր է:

**== KVINNA  
== KVINNA**



Ընդդեմ կանանց սկստմամբ  
բռնության կոալիցիա

Coalition to stop violence  
against women

Յեղիակներ՝ Արման Ղարիբյան, Չարուհի Յովհաննիսյան  
Սիրազրիչ՝ Ալետա Յակոբյան

Գրքի ձևավորումը՝ լուսինե թալալյանի

## **Ներածություն**

Սույն ձեռնարկը կազմվել է որպես կանանց նկատմամբ ընտանեկան և սեռական բռնությունը թեմայի պրոֆեսիոնալ լուսաբանման համար օգտակար գրականություն հայաստանյան զանգվածային լրատվամիջոցների, լրագրողների և խմբագիրների համար: Ձեռնարկը կազմելու նպատակով «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան ուսումնասիրել է միջազգային մասնագետների վերլուծություններն ու խորհուրդները, ինչպես նաև մշտադիտարկել և վերլուծել է 2019-2020 թվականներին հայաստանյան զանգվածային լրատվական միջոցներում կանանց նկատմամբ ընտանեկան և սեռական բռնությանն առնչվող խնդիրների լուսաբանումը: Մշտադիտարկումն իրականացվել է Rumors Monitoring հարթակի օգնությամբ. բանալի բառերի որոնման շնորհիվ առանձնացվել են հայաստանյան ՉԼՄ-ներում 2019 և 2020 թվականներին հրապարակված կանանց նկատմամբ ընտանեկան և սեռական բռնության թեմային առնչվող բոլոր նյութերը, ապա առանձնացվել են դրանցից չկրկնվող հրապարակումները, որոնք էլ ուսումնասիրվել են: Ընդհանուր առմամբ դիտարկվել է հայաստանյան ավելի քան 300 լրատվամիջոցում հրապարակված 739 նյութ, որոնցից 475-ը կանանց նկատմամբ սեռական բռնության, իսկ 264-ը՝ կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ:

Վերլուծության արդյունքում վեր են հանվել խնդիրներ և դրանց հիման վրա մշակվել են խորհուրդներ հայաստանյան զանգվածային լրատվամիջոցների, խմբագիրների և լրագրողների համար՝ հաշվի առնելով նաև միջազգային փորձը: Ձեռնարկում նաև ներառված են ոլորտին առնչվող գերատեսչությունների, հասարակական կազմակերպությունների տվյալները, որոնք կօգնեն լրագրողներին հեշտությամբ կողմնորոշվել, թե ում հետ կապվել թեմայի վերաբերյալ նյութ պատրաստելիս:

**Կանանց նկատմամբ  
ընտանեկան  
և սեռական բռնության թեմայի  
լուսաբանման վերաբերյալ խնդիրներ**

Վերլուծության արդյունքում հանգել ենք մի շարք եզրակացությունների և վեր ենք հանել խնդիրներ: Նախ արձանագրել ենք, որ նշված ժամանակահատվածում հայաստանյան լրատվամիջոցները ակտիվորեն լուսաբանել են կանանց նկատմամբ ընտանեկան և սեռական բռնությանն առնչվող խնդիրները: 44-օրյա պատերազմով պայմանավորված՝ 2020 թվականին նախորդ տարվա համեմատ ավելի քիչ նյութեր են հրապարակվել, սակայն լրագրողական նյութերի բովանդակության առումով էական տարբերություններ չատ չեն արձանագրվել: Փաստացի հայաստանյան մեդիա դաշտում կան պրոֆեսիոնալ լրագրողներ, որոնք կարողանում են զգայուն թեմաներ լուսաբանել: Սակայն կան և լրատվամիջոցներ, որոնք էջերում հրապարակվում է կանանց նկատմամբ ընտանեկան և սեռական բռնության վերաբերյալ լրագրողական էթիկայի առումով խնդրահարույց, միակողմանի, մանիպուլյատիվ և կեղծ տեղեկատվություն: Մեր գնահատմամբ՝ հիմնականում դա տեղի է ունենում միտումնավոր՝ քաղաքական նպատակներից ելնելով: Դրան զուգահեռ նկատվում է նաև այն երևույթը, երբ լրագրողի՝ թեմայի լավ չտիրապետելու պատճառով կարող են հրապարակվել այնպիսի վերլուծություններ, կարծիքներ, որոնք խնդրահարույց են կանանց և տղամարդկանց իրավահավասարության, գենդերային բռնության դեմ պայքարելու պետության պարտավորության և հասարակության՝ բռնության նկատմամբ անհանդուրժողականությունն դրսևորելու անհրաժեշտության տեսանկյունից:

Լրատվամիջոցների գերակշիռ մեծամասնությունը շարունակում է մնալ արձագանքողի դերում. թեմային մեծամասամբ անդրադառնում են որևէ տեղեկատվական առիթի դեպքում, հատկապես եթե տեղի է ունեցել ցնցող սպանություն, բռնաբարություն, որը հանրային քննար-

կումների առիթ է դարձել: Այլ կերպ ասած՝ լուսաբանումների մեծ մասն ուղղված է լոկ բավարարելու հանրային հետաքրքրասիրությունը, որը զանգվածային լրատվական միջոցների գործառույթներից ընդամենը մեկն է և բնավ ոչ ամենակարևորը: Կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների կողմից նախաձեռնված գործողությունները ևս թեմային անդրադառնալու առիթ են ստեղծում ՉԼՍ-ների համար: Իսկ սեփական նախաձեռնությամբ, առանց տեղեկատվական առիթի պատրաստված կյուրթերը փոքր մասն են կազմում, թեև հարկ է նշել, որ որակական առումով հենց այդ կյուրթերն են դրականորեն առանձնանում: Այդպիսի կյուրթերի զգալի մասը պատրաստվել է որևէ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Այսինքն, եթե անգամ տվյալ լրատվամիջոցը մտահոգված է կանանց նկատմամբ բռնության խնդրով, այնուամենայնիվ, այն առավել արդյունավետ գործում է, երբ առկա են հավելյալ ֆինանսական ռեսուրսներ այդ թեման հանգամանալից և հետևողական լուսաբանելու համար: Դրամաշնորհային ծրագրի բացակայության պարագայում կանանց նկատմամբ ընտանեկան և սեռական բռնության թեման դուրս է մնում հիմնահոս լրատվամիջոցների առաջնահերթությունների ցանկից:

Մտահոգիչ է թեմայի վերաբերյալ մանիպուլյատիվ, կեղծ, հաճախ քարոզչական, ոչ պրոֆեսիոնալ, օրենքի և էթիկայի առումով խնդրահարույց կյուրթերի հսկայական քանակը, որոնք հրապարակվել են ուսումնասիրված ժամանակահատվածում: Լրատվամիջոցները ավելի մեծ ուշադրության են արժանացրել Ստամբուլյան և Լանզարոտեի կոնվենցիաների վավերացման շուրջ շահարկումներին ու աղմուկին, քան բռնությանը, որին ամեն օր ենթարկվում են կանայք և աղջիկները: Ավելին, քիչ չեն այն հրապարակումները, որոնք թիրախավորում են կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին և իրավապաշտպաններին՝ նվազեցնելով նրանց ազդեցությունը: Դա առաջին հերթին հարվածում է բռնության ենթարկված կանանց, քանի որ նրանց իրավունքների պաշտպանությամբ հետևողականորեն զբաղվում են հենց այդ հասարակական կազմակերպությունները:

Կանանց նկատմամբ ընտանեկան և առավել հաճախ սեռական բռնության թեմայի վերաբերյալ հրապարակված լրագրողական կյուրթերը հիմնականում զուրկ են փորձագիտական գնահատականից. չկան հղումներ՝ մասնագետներին կամ հետազոտական որևէ աղբյուրի, մի-

ջազգային կամ տեղական վիճակագրությանը:

Ավելին, նյութերից շատերում կանանց նկատմամբ բռնությունը չի դիտարկվում մարդու իրավունքների խախտման, խտրականության լույսի ներքո, իսկ կանանց դեմ ուղղված հանցագործությունների լուսաբանումը հիմնականում սահմանափակվում է տվյալ դեպքի մանրամասների ներկայացմամբ՝ առանց երևույթն անվանելու ընտանեկան բռնություն կամ կնասպանություն: Ընտանեկան բռնության վերաբերյալ որևէ դատաքննություն ուսումնասիրված ժամանակահատվածում հետևողականորեն չի լուսաբանվել հայաստանյան լրատվամիջոցներում: Իսկ սեռական բռնության վերաբերյալ դատաքննությունների լուսաբանումը գրեթե անհնարին է, քանի որ դրանք հիմնականում, գործի առանձնահատկությունից ելնելով, դնսփակ են անցկացվում: Անգամ վերլուծական նյութերում հիմնականում բացակայում են խնդիրը գենդերային անհավասարության, գենդերային հիմքով բռնության դիտանկյունից քննարկելու փորձերը: Երբեմն նաև չի պահպանվում հարգանքը բռնության ենթարկված, անգամ սպանված կնոջ արժանապատվության նկատմամբ. հանրայնացվում են նրա անձնական տվյալները:

Լրատվամիջոցների մեծ մասը կանանց նկատմամբ բռնության խնդիրն անդրադառնում է իրադարձային, հատվածական ձևով՝ որպես համակարգային խնդիր չդիտարկելով այն: Բազմաթիվ են բռնության դեպքերի վերաբերյալ ոստիկանական ամփոփագրերը, պաշտոնական հաղորդագրությունները, որոնք արտատպվում են նույնությամբ, սակայն լրատվամիջոցներից քչերն են թեմային անդրադառնում պաշտոնական թվերից անդին: Չարմանալի է, որ գրեթե ամեն շաբաթ լրատվական կայքերի նյութերի վերնագրերում ընտանեկան բռնության դեպքերի մասին արձանագրումը չի խրախուսում բազմաթիվ լրատվամիջոցների լուսաբանելու թեման սեփական նախաձեռնությամբ:

Կանանց նկատմամբ ընտանեկան և սեռական բռնության լուսաբանման մեկ այլ խնդիր է նյութերի պատկերավորումը (վիզուալիզացիան): Նյութերի մեծամասնությունը, որտեղ բացակայում է բանախոսի լուսանկարը կամ կազմակերպված միջոցառումից որևէ կադր, սովորաբար ուղեկցվում է կնոջ նկատմամբ բռնության լուսանկարներով: Դրանց մեծ մասը համացանցում առկա պատկերներ են, որոնք առաջիններից են հայտնվում որոնողական համակարգում «ընտանեկան



բռնություն» կամ «սեռական բռնություն» բառակապակցություններով լուսանկարներ փնտրելիս: Այս պատկերներում կանայք ներկայացված են ստորադասված, հաճախ ծնկած դիրքում, արցունքներն աչքերին, զգգգված մազերով, իսկ տղամարդիկ իշխողի՝ բռնարարի դիրքում, բռունցքը պարզած, երբեմն կնոջ կոկորդից բռնած, դեմքի ագրեսիվ միմիկայով: Մի կողմից այս լուսանկարներն արտացոլում են այն իրականությունը, որը տիրում է բազմաթիվ ընտանիքներում, և դա ցույց տալը ևս ընտանեկան բռնության առկայության բարձրաձայնման եղանակներից մեկն է, մյուս կողմից էլ այդպիսի պատկերների հաճախակի օգտագործումը դիտողների մոտ ստեղծում է ընտանիքում կնոջ և տղամարդու կարգավիճակի վերաբերյալ պատկերացումներ, որոնք կարող են վերածվել կարծրատիպերի: Իսկ, որ ամենավտանգավորն է, բռնության կադրերի հաճախակի օգտագործումը և վիճակագրական տվյալների պարբերական հրապարակումը, առանց վերլուծության և կանանց բռնությունից պաշտպանելու պետության պարտավորության խնդրի բարձրաձայնման, կարող է նպաստել այդ երևույթի առկայության հետ հանրային հաշտեցմանը, անտարբերության ձևավորմանը կամ ամրապնդմանը:

Այսպիսով՝ թեև վերջին տարիներին կանանց նկատմամբ ընտանեկան և սեռական բռնության թեման արդիական է դարձել հայաստանյան ՉԼՄ-ների համար և փոքրաթիվ ՉԼՄ-ներ և լրագրողներ ցանկանում և կարողանում են խնդրին անդրադառնալ պրոֆեսիոնալ ու գեղեցիկագայուն մոտեցմամբ, այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ թեմայի լուսաբանումը շարունակում է մնալ ոչ հետևողական և հատվածական: Իսկ քաղաքական դրդապատճառներով թեմայի վերաբերյալ մանիպուլյացիաներն ու կեղծ տեղեկատվության ակտիվ շրջանառությունը, հասարակական կազմակերպությունների և իրավապաշտպանների թիրախավորումը խոչընդոտում են թեմայի վերաբերյալ հանրության պատշաճ իրազեկմանն ու գիտակցության բարձրացմանը: Այս ամենի հետևանքով կանանց նկատմամբ բռնության թեման մարդու իրավունքների խախտման տեսանկյունից մնում է թերի լուսաբանված:

# **Կանանց նկատմամբ ընտանեկան և սեռական բռնությունը լուսաբանելու վերաբերյալ**

## **խորհուրդներ**

### **Ջանգվածային լրատվության միջոցներին, լրագրողներին, խմբագիրներին**

Ընտանեկան և սեռական բռնությունը զգայուն թեմա է, որի լուսաբանման համար լրագրողը որոշակի պատրաստվածություն պետք է ունենա: Ստորև ներկայացված խորհուրդները օգտակար կլինեն ինչպես սկսնակ, այնպես էլ կանանց նկատմամբ բռնության լուսաբանման փորձ ունեցող լրագրողների համար:

**Կնոջ  
նկատմամբ  
բռնությունը  
գենդերային  
անհավասարության  
դրսևորում է**

Անկախ նրանից, թե ինչ ամիթով եք անդրադառնալու թեմային՝ նախ պատրաստվեք այս զգայուն խնդրի լուսաբանմանը: Կանանց նկատմամբ բռնությունը հիմնականում գենդերային հիմքով բռնություն է, այն գենդերային անհավասարության ամենաբիրտ դրսևորումն է, միևնույն ժամանակ այդ անհավասարությունը պահպանելու միջոց է: Եթե Դուք ունեք գենդերային կարծրատիպեր, տղամարդու և կնոջ, նրանց հարաբերությունների վերաբերյալ սեռով պայմանավորված նախապաշարմունքներ, ավելի լավ է չչտապեք լուսաբանել կանանց նկատմամբ բռնության թեման: Ժամանակ տվեք ինքնեդո՞ Ձեզ, կարդացեք գենդերային ուսումնասիրությունների վերաբերյալ գրականություն, հետազոտություններ, լսեք մասնագետների ելույթները, փորձեք հաղթահարել սեփական կարծրատիպերը և միայն դրանից հետո «մոտե-

ցեք» այս թեմային: Հակառակ դեպքում Ձեր նախապաշարմունքները կարող են խանգարել Ձեզ էթիկապես ճիշտ և գեներազգայուն կյուբեր ստեղծել:

**Անվանեք  
բռնությունն  
իր  
անունով**

Ընտանիքի անդամի կամ գուզընկերոջ կողմից կնոջ նկատմամբ բռնության դեպք լուսաբանելիս որակեք այն որպես «ընտանեկան բռնություն», բռնություն գործադրողին՝ «բռնարար», իսկ եթե կինը բռնության պատճառով սպանվել է, դեպքը որակեք որպես «կնասպանություն»: Կնոջ նկատմամբ բռնությունը զուտ կենցաղային վեճ, քաջքոշուկ կամ ծեծ ներկայացնելը չի դիտարկում խնդիրը որպես գեներալային անհավասարության հետևանք, չի ընդգծում կանանց նկատմամբ բռնության համատարած լինելը և նվազեցնում է դրա հանրային նշանակությունը:

**Կանանց  
նկատմամբ  
բռնությունը  
մարդու  
իրավունքների  
խնդիր է**

Ընտանեկան և սեռական բռնությունը մարդու իրավունքների կոպիտ խախտում է և պետք է լուսաբանվի որպես այդպիսին: Բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր է, մասնավոր դեպքը ներկայացնելիս անդրադարձեք նաև երկրում կանանց նկատմամբ բռնության ընդհանուր վիճակին, կանանց և տղամարդկանց անհավասարության խնդրին, որն էլ հիմնականում պատճառ է դառնում կանանց նկատմամբ բռնության: Խնդիրն ընդհանրացնելու հարցում Ձեզ կօգնեն կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունները, իրավապաշտպաններն ու ակտիվիստները, որոնք սովորաբար

պատրաստակամ են խոսելու լրագրողների հետ: Նյութն առավել բազմակողմանի դարձնելու համար ստացեք մեկնաբանություններ, պատասխաններ նաև այն կառույցներից ու անձանցից, որոնք ի պաշտոնե պատասխանատու են կանանց բռնությունից պաշտպանելու, բռնությունները կանխարգելելու և նվազեցնելու համար (պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների տվյալները կգտնեք Չավելված 1-ում):

### **Իրավիճակը թվերից անդին**

Մի՛ սահմանափակվեք ընտանեկան բռնության վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություններով և վիճակագրական տվյալներով: Բացատրեք Ձեր դիտողին/ընթերցողին, թե ինչ հետևանքներ է ունենում բռնությունը, քանի կին է զոհվում կյանքից, քանի երեխա է որբանում և քանի տղամարդ է հայտնվում ազատագրկման մեջ բռնությունը ժամանակին չկանխարգելելու պատճառով:

Վերլուծեք վիճակագրական թվերը. ոստիկանության կողմից արձանագրած դեպքերից քանի՞սն են կարճվում, ի՞նչ հիմքով, ինչո՞ւ է նախաքննական մարմինը գործը կարճել կնոջ բողոքի բացակայության պատճառով, ի՞նչ հանգամանքներում է կինը հետ վերցրել բողոքը: Ոստիկանության արձանագրած դեպքերից քանի՞սն են մեղադրական եզրակացությամբ ուղարկվում դատարան, դրանցից քանիսի՞ն դեպքում է լինում մեղադրական դատավճիռ, բռնարարի պատիժը որքանո՞վ էր համաչափ, որքանո՞վ են այդ պատժատեսակները կանխում հետագա բռնությունները տվյալ կնոջ նկատմամբ, արդյո՞ք այդ պատժաչափերը բավարար են, որպեսզի զսպեն և կանխեն բռնություններն այլ ընտանիքներում: Այս հարցերը պետք է ուղղել ոլորտի պատասխանատուներին:

Վիճակագրական տվյալները զուգահեռեք իրական պատմությունների հետ: Հղում արեք նախկինում Ձեր լուսաբանած դեպքերին, վերապատմեք դրանք: Այդպիսով ընթերցողը/դիտողը թվերը չի ընկալի զուտ որպես վիճակագրություն, այլ կհասկանա, որ դրանց հետևում մարդկային խեղված կյանքեր են:

## **◀ Ետևողական լուսաբանում**

Ընտանեկան և սեռական բռնության վերաբերյալ հարուցված քրեական գործերը լուսաբանեք հետևողականորեն, եթե հնարավոր է, նախաքննության փուլից: Գործերի զգալի մասը կարճվում են նախաքննության փուլում կամ բռնարարքներին այնպիսի որակումներ են տրվում, որոնք մեղադրական դատավճռի ժամանակ լավագույն դեպքում տուգանքով են սահմանափակվում: Եթե տուժողը ունի իր շահերը ներկայացնող փաստաբան, նախ կապ հաստատեք նրա հետ՝ տեղեկանալով գործի վերաբերյալ թույլատրելի մանրամասներին (խուսափելու համար նախաքննական գաղտնիք հրապարակելուց): Փաստաբանի հետ զրուցելուց հետո փորձեք կապ հաստատել նաև տուժողի հետ և հարցնել նրա թույլտվությունը, թե որքանով է նա պատրաստ գործի լուսաբանմանը, ինչ չափով է ցանկանում անձնական տվյալներ հրապարակել: Կարևոր է գործի շարունակական լուսաբանումը, հատկապես մեղադրական դատավճռի անդրադարձը: Սա հանրության մեջ կարծիք է ձևավորում, որ բռնարարները օրենքով նախատեսված պատժի են ենթարկվում: Պատիժների համաչափության հարցի վերաբերյալ կարող եք առանձին նյութ պատրաստել՝ զրուցելով փաստաբանների, իրավապաշտպանների և բռնության ենթարկվածների հետ: Եթե վերջիններս ընդգծում են օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը, ապա այդ մասին հնարավորության դեպքում հարցեր ուղղեք օրենսդիր և գործադիր մարմնի ներկայացուցիչներին:

Ուշադրություն դարձրեք, թե արդյոք բռնության ենթարկված կնոջ վերաբերյալ եղել են հանցագործության մասին հաղորդումներ, թե ոչ, ինչ ընթացք են տրվել դրանց: Հաճախ բռնության մասին ոստիկանությունում հաղորդում տալուց հետո կնոջ նկատմամբ ևս քրեական գործ է հարուցվում բռնարարի բողոքի հիման վրա: Այսպիսով փորձ է արվում ճնշել կնոջը, նրան ստիպել, որ բողոքը ետ վերցնի:

**Խուսափեք  
անձնական  
տվյալներ  
հրապարակելուց**

Ընտանեկան բռնության ենթարկված որոշ կանայք պատրաստակամ են ներկայանալու իրենց անունով և հանրայնացնելու անձնական տվյալներ: Այդպիսի կանայք սովորաբար ավելի քիչ են: Ցանկացած պարագայում հարցրեք նրանց, թե ինչպես են ցանկանում, որ ներկայացվի իրենց պատմությունը: Հիմնականում կանայք նախընտրում են մնալ անանուն: Այս դեպքում կամ կարող եք Ձեր կյանքում փոխել նրա անունը, կամ պարզապես սահմանափակվել անվան սկզբնատառերով: Տուժողի անձը չբացահայտելու նպատակով նախընտրելի է նույնությամբ վարվել բռնարարի անձնական տվյալների հետ. քանի որ բռնարարը տուժողի հետ ընտանեկան կամ զուգընկերային կապ ունեցող մարդ է, նրա անձը բացահայտելով՝ ըստ էության բացահայտում ենք նաև տուժողի անձը: Սեռական բռնության ենթարկված կնոջ դեպքում լուսաբանումը մշտապես պիտի լինի անանուն, ավելին՝ պետք է հնարավորինս քիչ անձնական տվյալ հրապարակել (աշխատավայր, համայնք, մասնագիտություն), եթե կա հավանականություն, որ դրանց միջոցով հնարավոր կլինի նույնականացնել անձին:

Քրեական գործերը լուսաբանեք ոչ թե գործի ցնցող մանրամասների, այլ տուժողի արդար դատաքննության իրավունքի և արդարացի ու իրավաչափ պատժի դիտանկյունից: Երբեմն կնոջ նկատմամբ տեղի ունեցած բռնության նկարագրությունը կարող է սարսափ ֆիլմ հիշեցնել, սակայն Ձեր նպատակը չպետք է լինի այդ զգայացունց տեսարանների նկարագրությամբ դիտումների քանակ ապահովելը: Անշուշտ, ընթերցողի/դիտողի ուշադրություն գրավելը զանգվածային լրատվամիջոցի համար կարևոր է, սակայն այդ ուշադրությունը ստանալուց հետո ՉԼՄ-ն պետք է ոչ միայն հետաքրքրի ու ցնցի, այլև իրազեկի, կրթի ու մտահոգի իր լսարանին: Որևէ դեպք լուսաբանելիս չպետք է սահմանափակվել միայն հարևանների կամ հարազատների պատմածով, առավել ևս եթե սպանություն է տեղի ունեցել: Ընտանեկան բռնության հետևանքով սպանված կանայք չեն ունեցել արժանապատիվ մահ, նրանց արժանապատվությունը պետք է հարգել գոնե մահվանից հետո: Նրանց անձնական կյանքի մանրամասները չպետք է հասանելի դառ-

Նաև հանրությանը, եթե դա չեն ցանկանում նրանց օրինական ներկայացուցիչները:

**Հարցազրույց  
բռնության  
ենթարկված  
կնոջ հետ**

Հաճախ կյուրթ պատրաստելիս անհրաժեշտություն է առաջանում զրուցելու բռնության ենթարկված կնոջ հետ: Առաջարկեք զրուցակցին իր համար ամենահարմարավետ միջավայրը: Եթե նա կարիք ունի, որ իր մտերիմը, փաստաբանը, սոցիալական աշխատողը լինի իր կողքին հարցազրույցի ընթացքում, համաձայնեք: Հարցազրույցից առաջ զրուցեք տուժողի հետ, ներկայացեք, համառոտ պատմեք, թե ինչ թեմաներ եք լուսաբանում, ինչու է Ձեզ համար կարևոր իր հետ զրուցելը: Եթե նկարահանումներ են լինելու, բացատրեք ընթացքը, քննարկեք տեխնիկական հարցերը, ծանոթացրեք Ձեր զրուցակցին նաև օպերատորի հետ (եթե նկարահանումն ինքներդ չեք անում), տեսագրումը/ձայնագրումը սկսեք բացառապես իր իմացությամբ և համաձայնությամբ: Ստեղծեք այնպիսի միջավայր, որտեղ բռնության ենթարկված կինն իրեն ապահով կզգա և կխոսի ազատորեն:

Հարցազրույցին պետք է պատրաստվել՝ ուշադրություն դարձնելով Ձեր խոսքին, արտահայտություններին, հարցերի ձևակերպմանը՝ մտածելով՝ ինչպես ձևակերպել հարցը, որ տուժողի մոտ չխորացնել տրավմաները, չստեղծել զգացողություն, որ լրագրողն էլ է իրեն մեղադրում կատարվածում: Օրինակ, «Դուք ինչո՞ւ չհեռացաք» ձևակերպման փոխարեն նախընտրելի է «որո՞նք էին այն խոչընդոտները, որոնց հետեւանքով Դուք չկարողացաք հեռանալ» տարբերակը կամ «ինչո՞ւ ոչ մեկից օգնություն չխնդրեցիք» հարցնելու փոխարեն այսպես ձևակերպեք հարցը. «Ումի՞ց օգնություն խնդրեցիք, ո՞վ Ձեզ աջակցեց»: Սեռական բռնության ենթարկված կնոջը մի՞ հարցրեք, թե ինչ հագուստ ուներ նա այդ օրը հագին, կամ արդյո՞ք ավկոհով օգտագործել էր, թե ոչ: Կնոջ տեսքը, ավկոհով օգտագործած լինելը որևէ կերպ չեն կարող արդարացնել բռնարարը, դրանք չպետք է դառնան քննարկման առարկա. եթե տեղի է ունեցել սեռական բռնություն, մեղավոր է բացառապես բռնարարը:

Նկատի ունեցեք, որ տուժողի համար դժվար է լինելու վերհիշել բռնության դրվագները և վերապրել դրանք: Մի՛ ստիպեք նրան մանրամասնորեն վերապատմել ամեն ինչ: Պատրաստ եղեք, որ տուժողը կարող է հուզվել և արտասվել, կարող է և ընդհատել հարցազրույցը, գուցե որոշ ժամանակ պետք կլինի, որ նա վերադառնա զրույցին կամ գուցե ստիպված լինեք մեկ այլ օր շարունակել այն:

### **Հարցազրույց բռնարարի հետ**

Ընտանեկան և սեռական բռնության թեման լուսաբանելիս երբեմն հնարավորություն է լինում զրուցելու նաև բռնարարի հետ: Այս դեպքում կարևոր է հարցնել, թե արդյոք բռնարարը զղչում է, և փորձել պարզել, թե իր զղչումը ինչպես է արտահայտվել, քանի որ շատ բռնարարներ դատարանում հայտարարում են, թե զղչում են, սակայն որոշ ժամանակ անց կրկնում են բռնարարքը: Հնարավորության դեպքում փորձեք բացահայտել, թե արդյոք բռնարարը մանկության տարիներին ենթարկվել է ընտանեկան բռնության կամ դրա ականատեսն է եղել, եթե այո, ապա որքա՞ն հաճախ, ինչպիսի՞ հարաբերություններ են ունեցել նրա ծնողները, ինչպիսի՞ դերակատարում է ունեցել ընտանիքում հայրը, մայրը: Փորձեք զուգահեռներ անցկացնել իր արարքների և մանկության միջև, պարզեք՝ արդյոք մանկության տարիներին բռնության ականատես լինելը կամ բռնության ենթարկվելը ազդում է չափափաս տարիքում բռնարար վարքագիծ դրսևորելու վրա: Թեմայի վերաբերյալ զրուցեք նաև հոգեբանների հետ: Բռնարարների հետ հարցազրույցի հրապարակումը որևէ դեպքում չպետք է վերաճվի նրանց արդարացնելու փորձի:



## **Ներկայացնել հաջողված պատմություններ**

Բռնության թեման լուսաբանելիս փորձեք գտնել և ներկայացնել հաջողված պատմություններ: Բռնության ենթարկված կանանց մի մասին հաջողվում է դժվարությունները հաղթահարելուց հետո երջանիկ կյանքով ապրել, նոր ընտանիք ստեղծել կամ ինքնուրույն և միայնակ ապահովել իր և իր երեխաների բարեկեցությունը: Այսպիսի պատմություններն անհրաժեշտ են բռնության մեջ ապրող կանանց ցույց տալու համար, որ կա այլընտրանք, որ կարող է և այլ կերպ լինել, և որ երջանիկ լինելու իրավունք և հնարավորություն ունեն բոլորը:

## **Պահել թեման ուշադրության կենտրոնում**

Բռնությունների կանխմանը նպաստելու լավագույն մեդիա գործիքը թեման մշտապես ուշադրության կենտրոնում պահելն է: Անդրադարձեք սեռական և ընտանեկան բռնությանն առանց տեղեկատվական առիթի: Սովորաբար լրագրողները թեմային անդրադառնում են, երբ որևէ ցնցող սպանության կամ դաժան բռնության մասին է հայտնի դառնում: Ընտանեկան բռնություն տեղի ունենում է ամեն օր, և խնդրին անդրադառնալու համար կարիք չկա սպասելու որևէ ցնցող կամ մեդիականացված պատմության: Ուշադրության կենտրոնում պահեք պատասխանատու մարմինների աշխատանքը, պարբերաբար հարցումներ ուղարկեք նրանց, հետևեք, թե արդյոք առաջընթաց արձանագրվե՞լ է նրանց աշխատանքում, թե ոչ: Վերլուծեք վիճակագրությունը, վերջերս տեղի ունեցած փոփոխությունները, դատական ակտերը. դա կօգնի հստակ պատկերացում կազմել, թե պետությունը որքանով է հաջողում իր՝ քաղաքացիներին բռնությունից պաշտպանելու պարտավորության կատարման հարցում:

Հնարավորության դեպքում նյութերին կցեք նաև պատասխանատու անձանց լուսանկարները կամ ներկայացրեք նրանց պատկերող տեսանյութեր: Պաշտոնյաների տեսանելիության բարձրացումը կարող

Է նպաստել, որ նրանք առավել աչալուրջ և պատասխանատու լինեն խնդրի նկատմամբ՝ իմանալով, որ հանրային վերահսկողության ներքո են աշխատում:

Նյութերում ներառեք բռնության ենթարկված անձանց համար նախատեսված աջակցման կենտրոնների, ապաստարանների տվյալները, հեռախոսահամարները, ինչպես նաև պետական մարմինների հեռախոսահամարները:

### **Նյութերի պատկերավորումը**

Ուշադրություն դարձրեք, թե ինչպիսի լուսանկարներ/պատկերներ եք օգտագործում ընտանեկան և սեռական բռնության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելիս: Կնոջ վրա բռնության կամ արյան հետքերը, պատռվածքները ամրապնդում են կարծրատիպը, թե բռնությունը միայն ֆիզիկական է լինում: Բացի դրանից՝ կնոջը մշտապես ճնշված, ծեծված, արցունքներն աչքերին, ընկճված, իսկ տղամարդուն ուժեղ, բիրտ, ագրեսիվ ու հարձակվողական տեսքով պատկերելը կարող է ձևավորել նախապաշարմունքներ, իսկ բռնության ենթարկվողների մոտ նաև անելանելիության զգացում, տպավորություն, թե շատերն են այդ վիճակում, և ոչինչ փոխել հնարավոր չէ:

Այդպիսի պատկերներից խուսափելու համար կարելի է ստեղծել նկարագարողումներ, որտեղ արտացոլված կլինեն ներընտանեկան բարդ հարաբերությունները, երբեմն նաև կնոջ նկատմամբ բռնությունը, սակայն ոչ ամենաբիրտ ու ցցուն ձևով:

Եթե բռնության ենթարկված կինը դեմ չէ հանդես գալ իր անունով և հանրությանը ցույց տալ իր դեմքը, ապա ցանկալի է, որ Ձեր նյութերում օգտագործեք այնպիսի լուսանկարներ, որտեղ նա հանդես կգա ուժեղ, բռնությունների շղթան կտորած և պայքարող կնոջ կերպարով: Սա կարող է զորեղացնող ու ոգևորող լինել բռնության ենթարկված մյուս կանանց համար:

## **Ֆիլտրեք մեկնաբանությունները**

Հետևեք սոցիալական ցանցերում Ձեր հրապարակումների ներքո թողնված մեկնաբանություններին: Բազմաթիվ են բռնությունն արդարացնող, զոհին մեղադրող, նոր բռնություններ խրախուսող մեկնաբանությունները, որոնք անհրաժեշտ է պարզապես հեռացնել: Սա որոշակի ժամանակ և ռեսուրս պահանջող աշխատանք է, սակայն այդպիսով Դուք Ձեր փոքրիկ ներդրումն եք ունենում կանանց նկատմամբ բռնության կանխման կարևոր գործում:

## **Չմոռանաք ինքնախնամքի մասին**

Բռնության թեման պարբերաբար լուսաբանելը կարող է հոգեբանական առումով բարդ լինել: Ոչ բոլորին է հաջողվում մասնագիտական հեռավորություն պահպանել ինդրից և զգացմունքային չվերաբերվել այն ամենին, ինչ լսում ու տեսնում են: Հաճախակի լսել բռնության ենթարկվածների պատմությունները, նրանց ապրումակցելը մասնագիտական այրման և սթրեսի կարող է հանգեցնել: Եթե պատրաստվում եք թեման շարունակաբար լուսաբանել, ապա կարևոր է հիշել ինքնախնամքի մասին: Ուշադրություն դարձրեք Ձեր ապրումներին, հոգեվիճակին: Գուցե կլինեն շաբաթներ, ամիսներ, որ չեք ցանկանա անդրադառնալ բռնությունների թեմային: Այդ կարճ դադարների ընթացքում փորձեք նաև հնարավորինս քիչ տեղեկանալ բացասական հույզեր առաջացնող իրադարձություններին: Չբաղվեք Ձեր սիրելի գործերով. սպորտային ակտիվությունը կամ գրականության ընթերցումը կարող է դրական ազդեցություն ունենալ Ձեր հոգեվիճակի վրա:

**Կանանց նկատմամբ ընտանեկան  
և սեռական բռնության խնդրի  
լուսաբանման համար օգտակար  
աղբյուրների տվյալներ**

**Պետական մարմիններ**

**ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,  
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին**

Յեռախոս՝ (+374 10) 52-14-31

**ՀՀ ոստիկանություն**

Լրագրողների հետ կապի համար նախատեսված հեռախոսահամար

Յեռախոս՝ (+37411) 56-02-63

**ՀՀ քննչական կոմիտե**

Յեռախոս՝ (+37411)-88-01-14

**ՀՀ մարդու իրավունքների պաշտպան**

Յանրային կապերի բաժին

Յեռախոս՝ (+37410) 53-76-34

## **Հասարակական կազմակերպություններ**

### **«Կանանց աջակցման կենտրոն»**

հասարակական կազմակերպություն

Շուրջօրյա թեժ գիծ (+374) 99 88-78-08

Կազմակերպությունը տրամադրում է իրավաբանական, սոցիալական, հոգեբանական աջակցություն ընտանեկան բռնության ենթարկված կանանց և նրանց երեխաներին, ինչպես նաև ժամանակավոր ապաստարան:

### **«Կանանց ռեսուրսային կենտրոն»**

հասարակական կազմակերպություն

Յեռախոս՝ (+374) 94 56-56-26

Կազմակերպությունը տրամադրում է անվճար իրավաբանական խորհրդատվություն կանանց աշխատանքային և ամուսնաընտանեկան հարցերի շուրջ, իրականացնում խմբային հոգեբանական հանդիպումներ կանանց համար: Կանանց ռեսուրսային կենտրոնը զբաղվում է նաև շահերի պաշտպանությամբ՝ ազդելով մշակվող և իրականացվող պետական քաղաքականության և օրենսդրական մեխանիզմների վրա ու խթանելով դրանց գեղեցիկագայունությունը:

### **«Կանանց իրավունքների կենտրոն»**

հասարակական կազմակերպություն

Յեռախոս՝ (+374) 10 54-28-28

Կազմակերպությունը տրամադրում է իրավաբանական և հոգեբանական աջակցություն ընտանեկան բռնության ենթարկված կանանց:

**«Կանանց իրավունքների տուն»**

հասարակական կազմակերպություն

Թեժ գիծ՝ (+374) 77 57-08-70

Կազմակերպությունը զբաղվում է ընտանեկան/սեռական բռնության կանխարգելմամբ՝ տրամադրելով անվճար սոցիալական, իրավաբանական և հոգեբանական խորհրդատվություն, նաև կանանց քաղաքական մասնակցության խթանման և նրանց տնտեսական հզորացման ուղղություններով՝ խթանելով կանանց մուտքն աշխատաշուկա, ձեռնարկատիրական ոլորտ և կրթական համակարգ:

**«Իրավունքի ուժ»**

իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

Յեռախոս՝ (+374) 41 12-90-04

Կազմակերպությունն իրականացնում է ընտանեկան բռնության գործերով դատական նիստերի մշտադիտարկում և լուսաբանում, ինչպես նաև մեղիայում խնդրի լուսաբանման մշտադիտարկում:

**«Փինք»**

իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

Յեռախոս՝ (+374) 60 37-72-77

Կազմակերպությունը զբաղվում է ԼԲԶ և տրանս կանանց իրավունքների պաշտպանությամբ, ջատագովում է ԼԳԲՏ հարցերի շուրջ հանրային քաղաքականության փոփոխությանը և տրամադրում է ծառայությունների ամբողջական փաթեթ՝ անվճար սոցիալական, իրավաբանական և հոգեբանական խորհրդատվություն համայնքի այն ներկայացուցիչներին, որոնց իրավունքները ոտնահարվել են սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության և/կամ գենդերային արտահայտման հիմքով:

**«Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների  
պաշտպանության կենտրոն**

հասարակական կազմակերպություն

Յեռախոս՝ (+374) 7704-30-42

Կազմակերպությունը նպաստում է Հայաստանում հաշմանդամություն ունեցող աղջիկների և կանանց քաղաքացիական, սոցիալ-տնտեսական, կրթական, առողջապահական և մշակութային իրավունքների իրացմանը՝ շահերի պաշտպանության, տեղեկատվության տարածման, իրազեկության բարձրացման և համագործակցության միջոցով:

